

Հ Ո Մ Ե Ր Ե Ի Վ Ի Ր Գ Ի Լ



ՈՅ չենք ուզեր Հոմերոսի և Վիրգիլիոսի նկարագիրն տունել, և կամ ընդ իրեարարադ դատել. զի այս մասին վրայ Յուլիոս Կեսար Սքալիճէր և յորովք 'ի գիտնոց երկար ժամանակ պարապեր են. և եթէ ընել իսկ կամենայինք, անօգուտ և ձանձրանալի տշխատութիւն մի պիտի լինէր, նոյն պատճառաւ, նուիրենա նորէն կրկնելով՝ որովք անթիւ գրեանք լեցուած են: Քլասիկի մ' ջանքս եղաւ քանի մի գիտողութիւն ընել, և մասնաւորապէս քննել և ուսալնել թէ ինչպէս մեծամեծ հեղինակաց կրնա՞նք հետևիլ: Եւ առ այս ուզեցի քննել թէ ինչպէս Վիրգիլիոս իւր Ենէականին մէջ հետևիւր է Հոմերոսի, և անոր անմահ քերթուածոց միջէն իւր մտաւ սեփականած է իրեն: Ինձ այնպէս կ'երևի որ այս քննութիւնս անօգուտ պիտի չլինի, նա մանաւանդ աւանդայն գեղեցիկ դպրութիւն սիրողաց հաճոյ և պիտանի:

Երբ սկիզբն առաւ յիտալիա գրութիւնն, առաջին և զլիսաւոր գործն եղաւ իրենց՝ 'ի լատին լեզու դարձնել յունական ընտիր և գեղեցկահիւս զբուռածքներ. որով առաջին դարուն մէջ բոլոր իրենց մտաց կարողութիւնն գարծուցին թարգմանութեանց և անոնց գեղեցիկ մասանց քննութեան վրայ: Ինչպէս կենաց առաջին ընթացից մէջ, քանի որ միտք գեւ չեն ընդարձակուած, և կամ դատարարակութեամբ և ուսմամբ չեն դարգացած, իբրև անուս և անփորձ մանուկ՝ կը ջանան հետևիլ

ինչ որ իրենց դիմաց կը տեսնեն: Այն տառն իւրաքանչիւր որ կը կարծէր իւր փառաց համար տշխատած լինել, երբ յոյն քերթուած մը 'ի լատին դարձրնել յաջողէր: Վասն զի ինչպէս կը վկայէ Որատիոս թէ յետ Պիւնիկեան պատերազմաց սկսան նորա քննել Սոփոկլէսի և Եսկիլէսի գրեանքը: Ահա այս կրնար ծաղկեցընել զլատին լեզուն և բանաստեղծութեան նախագահարար մի տալ: Քիչ վիւրջ Տերենտ, նոյն չափաւոր սահմանին մէջ չկեցաւ. այլ սկսաւ քննութիւններ ընել յունական կատակերգութեանց պարզութեան վրայ, և թէ պէտքինքն ամենին չէր կարծէր որ այն քան պարզութիւն կարելի ըլլայ լատին լեզուն մէջ մտցընել, ինչպէս կը վկայէ Կուինտիլիանոս, որչափ գեղեցկութիւն և քաղցրութիւն ունի յունական լեզուն, համարձակեցաւ սակայն երկու կատակերգութիւն մէկմէկու հետ բազադրելով ուրիշ մը չլինել, և ածով աւելի կենդանութիւն տալ նիւթոյն:

Որչափ որ երգիծաբանութիւնն բոլորովին հռովմէական է, ինչպէս կը վկայէ Կուինտիլիանոս, և անով առանձին մաս մը կը կազմէ Լուկիլիոս, բայց Որատիոս յայտնապէս կը ցուցնէ թէ նաև Լուկիլիոսի երգիծաբանութիւնք ամբալ յունական կատակերգութեանց մասեր ունին: Բայց որչափ որ այս մասին մէջ Լուկիլիոս շատ գոյութիւն ըրած է, ունի ուրիշ մասեր յորս է յատուկ անձնական բանաստեղծ, ինչպէս ճառերուն և թատերգութեանց մէջ, որում կը վկայէ նոյն իսկ Որատիոս:

- « Եւ ոչ փոքր առին պարծանս հարկանելով ձեռն յանձին,
- « Լքանել զՏլլէն շաւիղս և զառանին իրս հռչակել,
- « Եւ զլոգիեանս որ ուսուցին և որ դամ մի զպատմութեանն ար: »

Բայց այս՝ աւելի այն նիւթոյ մէջ՝ ուրնք զուտ բանաստեղծութիւն չենք. իսկ բուն մեր նպատակը պիտի լինի, ստոյգ բանաստեղծութիւնն, և այն աստուածական կոչուած լեզուն:

Ահա այս ծառայական նմանողութեւնէն Վիրգիլիոս զհռովմէական բանաստեղծութիւնն ազատեց. և իւր քերթուածով ուղելով մեղք դատաստան ընել, կրնանք ըսել իրաւամբ, որ իր նպատակն եղաւ ցուցնել քան զյսնաւկան գիւցաղներգութիւնն զլատինաւկանն, և արծարծել լեռնականին մէջ Տրոյիոյ ածիւնը, յաղթող գտնուելով նոյն իսկ քան զյաղթող Տրոյիոյ: Մեծ էր իր նպատակը և գերազանց. այնպիսի ժողովրդեան մը սկզբնաւորութիւն ուզեց երգել, որ նոյն ժամանակ ոչ միայն փառաւոր էր սիեզերակալ յաղթութեամբ, այլ և ազնուական 'ի ծագմանն: Ուղեց անցնիլ գարուց 'ի դարս յսկիզբն ժամանակաց, և մինչև 'ի սերունդս աստուածոց՝ քննել, որոնք էր Հռովմայ հիմնադիրը և զնախնիս այնպիսի տան մը, որ յայնժամ՝ ի պատարաստի կայր ընծայել բովանդակ աշխարհի տէր մը. վասն զի այն ամէն երևոյթը, և այնչափ նախատեսութիւնք որ կը տեսնուին լեռնականին մէջ, Յուլիոս Կեսարու սերնդեան, 'ի ճակատագրէն վիճակեալ գերազոյն մեծութեան, և իրեն և Օգոստոսայ ժամանակ եղած ժողովրդեան երջանկութեան վրայ, որ իշ բանի համար չէ, բայց եթէ քաջալերս տալու Հռովմայեցոց՝ հպատակելու 'ի լուծ իշխանութեան, յորմէ զարհուրեցի զառնիլն. և դարձեալ ոյսպիսի գիւցաղներգութեամբ որ համարէր Վիրգիլիոս՝ աւելի Օգոստոսայ պատիւ մը ընել, քան թէ իր Մշակական քերթուածովն:

Ինձ այնպէս կը թուի՝ թէ Վիրգիլիոս, այսպիսի խորհրդովք լի, քննեց տեսաւ զիշխականն Հռոմիի, իրոք գիւցաղներգութիւն մը լի մեծամեծ պատահարք, պատերազմք և այն ամէն աստուածական պաշտամամբ՝ զորս կը պահանջէ բարձր գիւցաղներգու-

թիւն մը. ընդհակառակն զՈգիսակոնրն զանազան գեղեցկութեամբ հոծ, և նկատեց անոր մէջ յաջորդութիւն մը ճանապարհորդութեան և ճոխ պատմութեան: Այն ատեն իմացաւ Վիրգիլիոս որ յիշերս Սկամանդրի հառուցանելու համար իւր գիւցաղին, պէտք էր Ոգիսակոնի նմանէր. և պատերազմաւ հաստատելու համար յիտալիա՝ պէտք էր միշտ զլիակալուն իր աշուց առջի ունեւար. դիտէր ևս որ գիւցաղներգութեան մը մէջ աստուածներ առաջին տեղին կ'ունենան: — Ենեաւ կը ճանապարհորդէ իբրեւ զՈգիսես, և կը պատեւրազմի իբրեւ զԱքիլլէս: Եւ որովհետեւ Աքիլլէս քաջասրտութիւնն 'ի կատարութիւն կը տանէր, և Ոգիսեսայ խահմութիւնը 'ի խաբէութիւն և 'ի խորամանկութիւն, Վիրգիլիոս այս երկու ծայրերը թողուցած՝ միջին կերպ մը կ'առնու, յորում քաջասրտութիւն և հնարիմոյցութիւնք անդեղ և իմի բարեպաշտութեամբ չափաւորուած են, և յարաւ և հնազանդութիւն աստուածոց կամաց:

Ինչ որ պատմութիւնն և աւանդութիւնն Վիրգիլիոսի կ'ընծայէր՝ ուրիշի համար թերեւ ոչ ինչ բան թուէր. բայց իւր բեզուն և լի երեւակայութեամբ և բնական բարձր հանճարով, և համբաւկան անչափ գեղեցկութեամբ, զոր իրեն սեփականած էր, կարող եղաւ ոչ ինչ բանէ՝ այնպիսի գեղեցկահիւս քերթուած մի ընծայել իւր ազգին, որ դարուց 'ի դարս 'ի զարմանս եզուամէն մտացի և հանճարեղ արանց: Եւ ինչպէս արդեօք կը կարգէ իւր պատմութիւնը:

Ենեաւ յետ ամսման Տրոյոյ կ'ելաւնէ 'ի նաւ, իրեն հետ տանելով զմիտաւած Տրոյիոյ, կու գայ կ'ենէ յիտալիա. կը պատերազմի և կը հաստատէ անգ տէրութիւն մը, կամ լաւ ևս ըսելով՝ կը հաստատէ հոն գաղթականութիւն մը. ինչպէս շատ անգամ՝ նոյնպիսի արկածից մէջ հանդիպած է՝ որ շատեր հեռի 'ի հայրենի երկրէ կառուցեր են քաղաքներ, բայց քերթողաց պակասու-

թեմայի որդային իրենց երգոյն նիւթ չեն առած, այժմ՝ ամենին անծանօթ են, վկայ ժողովուրդքն՝ զորս վանեց Յեսու 'ի փրկիկեցւոյ աշխարհէն, և որք տեղի տալով յերեսաց Աստուծոյ, զմիա-

ցուածս թշուառ սերնդոյն իրեանց՝ իրենց հետ կը տանէին ամէն տեղ: Վըկայ Անտենոր, որ փախստեայ յԱքայեցւոց կ'անցնէր 'ի Լիւրիկեա, ինչպէս կ'ազդէ մեզ քերթաւն, թէ

- « Զերծ Անտենոր 'ի միջոյ աքայեցւոց փախստական
- « Ի լիւրիկեան եմուտ 'ի ծոց, և անվրտանդ 'ի միջերկրայս
- « Լիբուրնեայց, վաղս առեալ ըզՏիմուռեայ աղբերակամբ . . .
- « Եւ կարաց նա զՊատուաւոն կառուցանել անդ քաղաք
- « Եւ գտեակրացւոց յարոյց դահ, և սահմանեալ ազդին անուն
- « ԸզՏրովական կախեաց անդ զէնս, և հանգարտէ արդ անխուղ
- « Խաղաղութեան

Հոս մանրամասն պիտի չքննենք՝ թէ ինչպէս վերգիլիոս այս իրեն նիւթը ընդլայնած է, և կամ ինչպէս Համբրոսի քառասուն և ութ գրքը իր Ենէականին երկոտասան գրոյ մէջ ամփոփած է: Իրեն այս երկոտասան գրքքեր կատարեալ ամբողջութիւն մի կը կազմեն, թէպէտ և ոմանք 'ի գիտնոց երկրասաներուդ մ'ալ կ'աւելցնեն, բայց ակն յայտնի կը տեսնուի որ աղէկ ուշ չեն գրած գրութեանց կազմութեան և քերթողին նպատակին: Առաջին վեց գրոյ մէջ Ոգիսականն տնխտիբ յամենայն մասունս կը գտնուի, ինչպէս և իլիականն վերջին վեց գրոյ մէջ: Եւ իրաւամբ պարտ է համարել որ եթէ վերգիլիոս ժամանակ ունենար վերջին ձեռք մը տալու իւր քերթութեանը, (որովհետեւ այնպիսի մեծ և բարձր նախադադափարի մը հետեւած է այս վերջին գրոյ մէջ, որ առաջնոց պէս ընտիր կերպով չէ աւարտած), աւելի կենդանի,

գորտուր, և ճոխադայն գեղեցկութիւն պիտի ունենար. և որով իլիականն՝ վերգիլեայ Ենէականին մէջ իր առաւելութիւնն պիտի պահէր, քան թէ Ոգիականն:

Ենէականին ամբողջ քննութիւն մը շատ երկտայն պիտի լինէր և գծուար. առ այս բաւական կը համարինք մաս մաս առնուլ և բաղդատել Համբրոսի այն մասանց հետ՝ որոյ կը հետեի:

Իլիականին մէջ Հերա սաստիկ առեւութիւն մը կը ցուցնէ ընդդէմ Տրուպացւոց և յայտնապէս իր ամէն կարողութիւնն 'ի գործ կը դնէ՝ զանոնք բոլորովին ջնջելու: Այս իր մարտնչութիւնն և կատաղութիւնն ամուսնական օրինաց համար չէր, զոր անդոսնէր էր իշխանն Տրոյիոյ, առեւանգելով ըզՀեղինէ Մենելաւեայ. այս սուրբ և յամենայն ժողովրդոց յարգուած օրէնքն, որոյ պահպանութեան Հերա իբր ամուսին Արամոզդայ առանձին խնամ ունի,

« Մանաւանդ խնամակալութիւն հորսանեկան զօրից Հերոյ:

Այլ առ այս մտութիւն՝ կը գրդէր զինքն աւելի Պարիսի գատաստանն և

իւր գեղայն անարգութիւն և Դանիմագետ պատուոյն յափշտակութիւնն.

- « Զև իսկ պատճառք ցասմանն անկեալ էին յուշոյ
- « Դառնակսկիծք, խոր 'ի սրտին պահէր վճիռն Պարիսի,
- « Նախատինք անարգութեան գեղոյն և ազդըն դժպըհի
- « Եւ պատանւոյն Գանիմադեայ յափշտակութեամբ պատուոյն:

Ըստմաներուս աւելի պայծառ ապա, ցուցութիւն մը կը տեսնենք իլիակա-

նին չորրորդ գրոյ մէջ. վասն զի հոն Տրուպացիք և Յայնք թոյլ կու տան Պարի-

սի և Մենեղուհայ առանձին մենամարտութեամբ վախճան տալ կռուոյն, այսինքն հիմէ Մենեղուհայ յաղթող գրանուէր՝ զՀեկինէ իրեն պիտի դարձնէին, և Յոյնք յետս պիտի դառնային ոչ հա ընդ Տրոյից մարտնչելով. բայց եթէ զինու զօրութիւնն Պարսիս նպաստէր, պատերազմը մէկէն վախճան պիտի առնոյր, և Հեկինէ վարձ պիտի լինէր իւր յաղթութեան՝ այս պատերազմիս մէջ որ ամենայն ինչ պիտի որոշէր։ Եղբորդ զտաւ Մենեղուհայ։ Առ այս Արամազդ՝ աստուածոց ժողովոյն մէջ կը հաստատէ կենալ այն պայմանին մէջ, զոր դրոժ էին երկու ժողովուրդը։ Հերա ևս հաւանեցաւ ընդ այն, թէ և զիրաւուն ամուսնութեան ունէր իր առջև, վտան զի յետ ամենայնի, հարկ էր տալ Մենեղուհայ զայն, զոր օրէնք իսկ տուած էին։ Տրոյացիք արդէն իսկ

տասն տարուան մարտիս իրենց պատահան ընդունած էին։

Բայց Հերա ունէր առ տրոյական ազգն ողջոյն իւր բարկութիւնը, առ այս ամէն հնարք կը գործածէ՝ այնպիսի արդար գործ մի արդիւնելու համար։ Եւ այնպէս կ'ընէ որ Տրոյացիք առաջին կ'ըլլան՝ սոյնպիսի հանգիստուոր գաշինք մը լուծելու, որով և կը վառի պատերազմ մի, որ իրենց կործանման առիթ պիտի լինէր։

Հերայի այս առեւտրութիւնն շատ նը պատու եղած է վիրգիւհայ. այնպէս կ'ընէ որ աստուածուհիս արգելք լինի Ենէասայ ամենայն ձեռնարկութեանց, յամենայնի կը հակառակի նմա, նախ վտան զի Տրոյացի է, և երկրորդ՝ որդի Աստղիկան՝ իւր հախախտուող թշնամոյն։ Կը զիմէ առ Եւս որ յալիս խորասուզելով ձեռնթափ ասնէ զլինէտս։

- « Քեզ, Եւս, ևս անմահիցքն Հայր արքայն մահացուաց
- « Իշխանութիւն ընկճել զալիս և ամբառնալ մըրքիսկո՛ւմ .
- « Ազգ ինձ օտախ ընդ աւերենեան նաւէ ընդ ծով յիտալիս,
- « Զլիւսն և ըղթեալքս իւր պարտեալս բերելով .
- « Տուր զօրութիւն հողմոց, ընկը ըզլաստափայտըս խորասույզ
- « Կամ զայլս տղուր ընդ ալիս արկ, և ցըրուեա ըզգիւհաւունս։

Եւ կ'ուզէ որ կեցընէ զլինէաս 'ի կարեքոն, որպէս զի արգելու իր ճաշնապարհը և չկարենայ իւր նպատակը 'ի գլուխ հանել՝ հաստատուելու յիտալիս. և այնպէս կ'երիկ ու կ'ուզէ հաշտուիլ ընդ Աստղիկան, միայն թէ այս հաշտութիւնն խոչընդոտն լինի Հոսի մայ հիմնարկութեան։

Նաւատորմին մէկ մասը նաւաբեկ կ'ընէ 'ի Սիկիլիա. բայց երբ կը տեսնէ վերջապէս զԵնէաս յիտալիս, և զերկինս նմա 'ի նպատ, ինքն միշտ անողբքի վրէժխնդրութեամբ՝ թէպէտ և առ

աստուածուհի, թէպէտ ամուսին և քոյր Արամազդայ, կը զիմէ 'ի դժոխս, ու կը դրդուէ զԱլեքսոն, խառնութիւն ձգելու յամենայնի, և գրգռել զմայեղանութիւն 'ի սրտին Տուռնայ։

Ինչ արգեք չըսիր 'ի ժողովի առ աստուածոց 'ի տասներորդ դիրս Ենէասին, երբ ճակատագիրն յայտնապէս կը տեսնուի, և Տուռնայ մահ կ'որոշուի. ինչպիսի խնարհութիւն և ազաւանք չուղղեր առ Արամազդ, որ գէթ Տրոյացի անուշը վերջընէ, որպէս սերունդը չկրցաւ ինքն բնաջինջ ընել։

- « Մի Լատինաց բնիկ բնակչաց հրամայեացես փոխել զանուն,
- « Մի Տրոյացիս և Տեկրացիս տացես կոչել, մի փոփոխել
- « Ըզձև և ըզբարբառ. այլ Լատին կացցէ յաւերժ
- « Կայացն արքայք ալբայեցիք, հռովմէական կացցէ զըրոհ
- « Խառայնով քաղութեամբ. անկաւ Տրոյա, թող զի անկցի
- « Եւ տրոյականն ընդ իւր անուն։

Ենէականին Հերայն յայտնապէս կը տեսնուի որ իշխականէն առնուած է. բայց Վիրգիլիոս այսու նմանութեամբ, անոր զգացմունքները աւելի կերպով յայտնի ըլլած է. վասն զի Հերաբայն ի ընդդէմ Տրոյացոց ունեցած ասելու, թնէն, ինչպէս տեսանք, առանձինն կերպով զինեալ էր բարկութեամբ ընդդէմ Ենէասայ, որով Հերա նոր նկարագիր մը կը ստանայ յենէականին և Վիրգիլիոս գերազանց կը գանուի քան զինութեամբ հետեողս այլոց:

Գիտէր Հերա, կ'ըսէ, թէ Հոռոմէական զօրութիւնն ֆլասակար պիտի լինէր Կարքեդոնի, որ իւր սիրելի քաղաքն էր, և զոր ցանկայր կարգել ու մը իրբն մայր քաղաքաց աշխարհի, որմա այս բանս պատճառ կը լինէր հակառակութեան ընդդէմ Ժողովրդեան մը, ընդդէմ որոյ արդէն առեւտրութեան անթիւ պատճառներ ունէր, և որ առիթ մ'է զաւ Վիրգիլիոսի՝ իւր երկրին պատիւը բարձրացնելու, յիշեցնելով իւր ազգին մեծամեծ զիւլցալուները: Եւ ինչ մեծ պարծանք կարող է լինել ազգի մը բան զայն՝ երբ իւր զօրութեանն չկա-

րենայ ընդդէմ կենալ աստուածունի Հերա:

Այսպէս ահա զրութիւն մը յարդի և ճոխ կը հանդիսանայ: Եւ որ հանճար կարէր այսպիսի ճարտար կերպով ի մէջ բերել այնպիսի ծաղկեալ Հասարակապետութեան մի կործանումը, որ միայն թուէր կարող լինել յաշխարհի յաղթող հանդիսանալ ընդդէմ Հոռոմայեցոց և անոնց բազմը վտանդի մէջ գնել, եթէ այնպիսի բան մը գտնուէր՝ որ կարող լինէր ֆլասակար զայն:

Վիրգիլիոս իւր Հերայի նկարագրութեան մէջ ոչ միայն իշխականին Հերայն նկարած է, այլ և Ողիսականին Պրոտոնը, ցուցնելով նորա տհաճութիւնը զոր ընդունած էր Ողիսեայ՝ յանձին իւր որդւոյն Պոլիսիսի՝ ընդդէմ զԺբազդ իշխանիս: Եւ ահա յերկուց՝ երրորդ մի կերպարունած է, որոյ զայրոյթն կ'առաւելու և ևս իւր զիւլցալին փառքն: Ազալանք և խնդրեալք՝ զորս կը մատուցանէ Հերա և պարգեք զորս կը խոստանայ Եւրոպայ, զրեթէ նայն են՝ զոր յիշխականին կը մատուցանէ նա ինքն Հերա առ փնոյ աստուածն:

« Բեզ, Եւրոպ, ետ անմահիցըն Հայր արքայն մահացուաց

« Իշխանութիւն՝ ընկճել զաշխ և ամբառնալ մըրըրկակոծ

« Են եօթներեակի ինձ երկնակ յաւերճարանից չընաղագեղք,

« Զիս ի նոսա գեղանին տաց քեզ ի հարսն ըլիիսպէ,

« Անլոյժ զօրիս կապեալ ընդ քեզ՝ զոլ կենակից քեզ յամա յամայր,

« Եւ որդւոց ըզքեզ հայր կացուցանել գեղաւորաց . . .

Իսկ յիշխականին

« Քառն, իշխան բողոքեցուն դից և մարդկան առհասարակ,

« Լըւար ապաքէն բանիս երբեմն, անսա և այժմ,

« Եւ ես՝ զամենայն աւտուրս եղէց քեզ շնորհակալ:

« Ե՛կ ինձ թըմբեա զզըւարթ աշերն Արամազդայ՝ նոյ արտեանամբն

« Անդէն և անդ ի նընջել իմում սիրով ի գիրկըս իւր:

« Գահ մի տաց քեզ ի պարգեա՝ ընաիր, սկիւ, յաւերժ անելո՛ւ . . .

« Այլ արի, և ես ըզմին քեզ ի Շնորհաց մանկագունից

« Տաց ամել ի հարսնութիւն և յամուսին քեզ անուանել,

« ԶՊատիթէէ, զորմէ կըլկաթ ես կաթողի զօր ամենայն . . .

Մըրիկն զոր կը հանէ Եւրոպ, բոլորովին Ողիսականէն առնուած է:

Այսպէս այս երկու գերազայն վարժապետաց նկարագրութեանց մէջ, պի-

տի զանեն գիտունք այն իրերը՝ որոց վրայ երբեմն դարմացած էին, հոս զԱպոլոն, հոն զՍուսերամարտիկս, և այլ անգին մնացորդս հնութեանց:

Ենէասայ յետ մորկաց 'ի Կարբեղոն հասնին՝ կրկնակի հետևութիւն է. յուրում՝ Վիրգիլիոս միացուցեր է Ոգիսեայ յարբունիս Ալկինեայ հասնիրը և Կալիփսէ յաւերժաշարսին քով գրանուիրը:

Աստղկան Կարբեղոնի մէջ Հանդիպին՝ կը յիշեցնէ մեզի Նասիրկայ՝ ծովեղբորը Ոգիսեայ հանդիպին: Ենէաս կը պատմէ Դիդէի Տրոյիոյ աւերումն, և անձնական աղէտը, ինչպէս Ոգիսես իւր արկածից և թշուառութեանց պատմութիւնը կ'ընէ Ալկինեայ արքայի. և այնպէս գեղեցիկ է Ենէասայ պատմութիւնն, և այնպիսի կերպով կը զուգակցի Խլիականին, որ կը թուի թէ Վիրգիլիոս չարունակելով այս հրաշալի գիւցազներգութիւնս, ամենայն փութով կը ջանայ հաւասարելու անոր, առանց աւելորդաբանութեան:

Դիդէի սէրն առ Ենէաս՝ է նոյն ընդ Կալիփսէի սիրոյն առ Ոգիսես. և հրամանն զոր կ'ընդունի Ենէաս յԱրամազ-

դայ թողուլ զԿարբեղոն, նոյն է զոր կ'ընդունի Ոգիսես թողուլ զՎայրն յաւերժաշարսին Կալիփսէի. բայց եթէ մէկն ուզենայ ճշգրիտ բաղդատութիւն ընել այս երկու մասանց, յայտնապէս պիտի տեսնէ միծ հանճարոյ մը ներգործութիւնը, և անոնց իրարու մէջ ունեցած զանազանութիւնը: Եւ յիրաւի, Կալիփսէ սիրահարեալ էր ընդ Ոգիսես, կը սիրէր զնա և բնական սիրով. վասն զի որչափ և անմահ էր, բայց չէր ազատ 'ի մարմնաւոր ակտից: Իսկ Դիդէինն բոլորովին տարբեր էր. վասն զի նոյն ինքն Ոլերն է, որ իւր մօրը աղաչանք՝ Ասկանեայ կերպարանքը կ'առնու՝ աւելի գիւրաւ պատրելու գիղիգէ: Կըրկին տատուածուհիք կը ջանան 'ի միտսին՝ իւր առաջին ամուսնոյն յիշատակը ջնջել 'ի մտաց նորա, արծարծելու առնոր սրտին մէջ այն զգացմունքները, զորս 'ի գերեզմանի Սիքեայ թաղուած կը համարէր:

« Պերճ արդարև յալթանակ, և քանի մեծ տարայք աւար

« Դու և մանուկքս և անուն յաւերժական և գերապանծ,

« Մասնեւ զաւուլ՝ դից երկուց կընոջ միոյ 'ի պարտութիւն...

Ոգիսես աստուածոց հրամանաւ կը թողուլ զԿալիփսէ: Բայց Կալիփսէ ցաւօք կը տառապի, յերկինս կ'ուղղէ իւր տրտունջն և մեղադրութիւնք. բայց այս տրտունջն և մեղադրումը ուրիշ բանի համար չէին, բայց եթէ մարդու մը և իւր հաճոյից կորստեան: Այն բնաւորութիւնը զոր Հոմերոս Կալիփսէի կու ապ,

դիւրեաւ զնա 'ի սէր Ոգիսեայ կապելով, իւր դիւցազնին առաւելութիւն մի չի տար յայսմ՝ նկատմամբ Ենէասայ: Դիդէի ցաւերը բոլորովին տարբեր են. Ենէասայ հեռանալը արտասուելով՝ իւր փառքը կ'արտասուէ, զայն՝ որ իր անունը մինչև յերկինս կը բարձրացընէր:

« Վաղ իսկ համբաւ իմ կորեաւ, որով յատեղըս ճէմէի:

Ինքն ուրիշ բան չէր երեակայիր, բայց եթէ անարգութիւն ինքեան՝ յիշխանաց զորս այնքան անարգած էր: Սիքեայ կերպարանքը, այն սիրելի և դժբաղդ պատկերը՝ որ միշտ իւր աչաց առջև կը նկատէր, և մահ միայն կը քնար իրեն. և կը մեռնի. որոյ մահուան պատմութիւնն այնպիսի հրաշալի և բնական գեղեցկութիւն մ'ունի, որ հարկ ինի զիմել յունական ողբերգու-

թեանց այն մասանց, յորս աւելի բուռն է զգացողութիւնն, և բերել բաղդատել Ենէականին չորրորդ զրոց վերջին մասին հետ:

Որպիսի յաջողակութիւն և ճարտարութիւն պէտք է այս մասին մէջ, յուրում ինքն Դիդէի յուսահատութեան մէջ կարենայ գտնել Կարբեղոնացուց տեսելութեան աղբիւր մը ընդդէմ Հոմով մայեցուց:

Ենէականի հինգերորդ գրոց մէջ վիր-
դիլիտի նկարագրած խաղը, բոլոր-
վին ինչն բանն է իրականի քսաներորդ-
երորդ գրոց մէջ նկարագրուածին
հետ. բայց պէտք է խոստովանել որ այս
բանս աւելի իշխականին վայելուչ էր,
յորում ամենապատշաճ էր Աքիլիսի
հատուցանել այս վերջին հարկը Պատրո-
կլի, որ գեռ այն ինչ իւր յետին շունչն
արձակեր էր. իսկ Ենէասի չէր այնչափ
յարմար՝ որ 'ի ճանապարհորդութեան'
այսպիսի շքեղաշուք հանդիսիւ իւր հօր
Անքիսեսայ տարեգարծը կատարէ. բայց
ինքը այս կազերուն նկարագրութեանց
փոփոխութիւն մը խառնած է, որով ա-
ւելի հաճելի կ'ընէ զայնս ընթերցողաց:
Վասն զի նախ նաւամարտութիւնն իւր
յատուկ գիւտն է, գուցէ հռովմայական
հին նաւամարտութիւնք այս գաղա-
փարս իրեն աղղած լինին. նոյնպէս
նաեւ Նիստոի արկածն, յորում աւելի
Եւրիպիէայ կու ապա առաւելութիւն, և
հանդիսականաց համակրութիւնք եւ-
կուքին վրայ եւ կը ձգէ. և ընթերցող-
դաց միտքը կը պատրաստէ այն անձին
վրայ՝ զոր յառաջ կը բերէ բանաստեղ-
ծը իններորդ գրոց մէջ, յորում նոցա
փոխադարձ մտերմութիւնը իրենց մա-
հաւան եւ առիթ լինի Անտիքայ և Սե-
նեւաւէայ արկածն՝ զոր յառաջ կը բե-
րէ Հոմերոս, կրնար ազգած ըլլալ վիր-
դիլիսայ՝ փոփոխել զիպուածներով իւր
քերթաւածը, բայց ոչ եթէ փոփոխելուն
կերպը՝ զոր 'ի կիր կ'առնու այս տեղս:
Բայց նա իւր ամենայն արուեստը 'ի

գործ զրած է այն մասին մէջ, յորում
'ի նկարագրութիւն կ'առնու Տարեայ
և Ենգուլիսայ մենամարտը, յոր բնա-
պէս մեծ հաճոյք կը զգայ իւրաքանչիւր
ոք, տեսնելով 'ի հաստադր ոք յանգգնու-
թիւն և կատաղութիւն, ծերունայ մը
տկարութեան առջև, զոր իւր քաջու-
թիւնն կ'արծարծէր՝ անհաւատարմար-
տի մը ձեռք զարնել. իսկ ընդհակա-
ռակն իշխականին այն մասը, որ այս
մասին կը համապատասխանէ, ուժեղն և
երիտասարդագոյնն յերկուց մարտաց
'ի պատերազմն յերկիր կը կործանէ
իւր տխրահեղ, և որ բնական ըլլալով՝
հանգիսականաց վրայ շատ ազդեցու-
թիւն չընէր, և ոչ անոնց՝ որոնք կ'ըս-
քանչաւան քերթուածոյն վրայ: Ուստի
վիրգիլիսս այս տեղս թողուցած է գի-
լիական և Ոգիսականին դիմած է, յո-
րում գտնելով Ոգիսեսայ մենամարտու-
թիւն ընդ իրոսի, յարմար կը համարի
կարգելու զայն 'ի խաղս իւր: Գարձեալ
ուրիշ հաճութեամբ կը տեսնենք ինչ
որ վիրգիլիսս այս զրբին մէջ՝ բոլոր-
վին իրեն կողմանէ կ'աւելցնէր՝ իր ազգը
աւելի բարձրացնելու համար, այսինքն
այն քաջակորով երիտասարդը՝ զորս Ե-
նէաս իրեն հետ յիտալիա կը տանի, և
զորս քերթողն կը ցուցնէ Հոմովայե-
ցոց՝ իբրեւ իշխանս հռովմայական այլ
և այլ ցեղից:

Եւ կը համարուի որ այս խաղերը ա-
նոնցմէ սկիզբն առած լինի, զորս գեռ
եւ կը դարձած էին Հոմովայեցիք, և որ
Տրովական խաղ կ'անուանէր առնոստ:

- « Ասկանիոս նախկին եմոյժ զայս սովորոյթ արշաւանի
« Եւ զձխամարտ 'ի պատելուն պարբոսքը զերկայնն Ալեա,
« Եւ 'ի հանգէս ուսոյց ամեւ զայն Լատինացն վաղընձույ,
« Եւ որով ինքն օրինակաւ և արտաքին մանկտին ընդ իւր
« Նափին իւրոցն ալբայեցին ուսոյց, և մեծն անախ Հոմով
« Ընկալեալ պահեաց ըզփառսն հայրենիս, ուստ Տրովա
« Կալաւ մանկտին ցարգ անուն, և արովական յորջորջի գունդ:

Իսկ Ենէասայ 'ի սանդարմետս ճա-
նապարհորդելն յայանի կը բանսնուի ու-
կից առած լինելն: Ոգիսականին մէջ՝
Ոգիսես կ'երթայ խորհրդակցելու ընդ

բոստանին Տիրիսեսայ. յենէականին՝ առ-
հայր իւր կ'ուզելորի Ենէաս: Ոգիսես
կը տեսնէ զայն ամէն երեսելի անձինք՝
որք իրմէն առաջ եղած էին, և զանոնք

որոց ականատես եղեր էր. կը նկատէ
անդ 'ի մէջ բազմաց զԱյս, ընդ ու-
րում ունեցեր էր այն հակառակամիտ
կարծիքն 'ի վերայ զինուց Ա. քիլլեայ, և
որ գոռոզ ամբարտաւանութեամբ և
խորհրդական լուծեամբ կը հայի առ
Ոգիսես: Տիրեսի սակաւ ինչ կը խօսի
ընդ Ոգիսեսայ, և սակաւ ինչ յասնէ, վերջ
տալով խօսիցն՝ միմին և խորհրդական
պատասխանով մը: Բայց ենեականին
'ի սանդարամետո իջնելու հանդերձան-
քն շատ հրաշալի է, թէպէտ և Ոգի-
սականին այս մասն, ուսկից օգտուած
է Վիրգիլ՝ շատ գեղեցիկ չէ:

Ենէտա 'ի Սանդարամետո կը հանդի-
պի Դիդէի, որ յամառ լուծեամբ իւ-
րեն կը նայի. արհամարհեալ և բռնա-
մահ հաղով մը վրայ այս լուծիման ա-
ւելի ակզու և բուռն կ'երեւայ. քան թէ
դիւցադին մը վրայ, յորում պէտք չէր
որ ցան այնչափ ազդեցութիւն բնէր,
և որ յետ մահու պէտք էր հանէր 'ի
մտաց այս կենաց տկարութիւնք. ընդ-
հակառակն Դիդէի ահաճութիւնքն 'ի
բնութենէ վշտաց առաջ եկած են, որք
թոյլ չեն տար զմեզ ևս և յետ մահու,
եթէ ուզենանք հաւատաւ ընծայել քեր-
թողաց:

Ենէտայ վահանն՝ է նոյն Ա. քիլլեայ
վահանն: Բայց Վիրգիլ թէ ասորեկա-
րադրութեան մէջ, և թէ Ենէտայ իւր
հօր հետ ունեցած բանակցութեան մէջ,
միշտ ուշադիր փառաց Հռովմայ՝ առիթ
կ'առնու նկարագրելու հռովմէական
պատմութեան այն ամենայն գեղեցիկ
արկածները՝ Ենէտան սկսեալ մինչև
ցլմագոստոս Մեծն: Ընդհակառակն Ա-
քիլլեայ վահանին վրայ անտարբեր ի-
րեր նկարուած կը տեսնենք. և Ոգիսես
'ի դժոխս միայն իրեն ծանօթ դիւցա-
զունքը կը տեսնէ, որք այնչափ 'ի հե-
տաքրքրութիւն չեն շարժեր զմարդս,
ինչպէս ապագայ իրաց պատմութիւն
մը: Եւ ահա այս մասանց մէջ հարկ կը

1 Աստ պատշաճ էր մեզ գինը գէտ առ գէտ
երկու հեղինակաց ևս հատուածն. յորս մտա-
գիւր ընթերցողք լաւ պիտի տեսնէին երկուքին
ևս հանձարոյ աստիճանն, թէ նախագաղափա-
րին և թէ հետևողին. սակայն երկարութեան

համարինը ըսելու՝ թէ լատին բանաս-
տեղծն հետեւած է յոյն բանաստեղծին,
ինչպէս նկարիչք և քանդակագործք
երևելիք կը ջանան հետեւիլ բնութեան:

Հոմերոսի նաւահամարը՝ նա մանա-
ւանդ երբ կը սկսի բոլոր գօրքեր 'ի թիւ
անցնել առ 'ի յօդնութիւն Տրովացոց,
իլիականին ամենաճոխ և գեղեցիկա-
հիւս մասն է: Վիրգիլիտա զայն 'ի դործ
կ'ածէ ըստ իւր սովորական եղանակին,
երբ կը խօսի այն ժողովրդոց վրայ, ու-
րոնք կամ կը միաբանին ընդ ենեասայ,
և կամ ընդ Տուանոսի: Երկու կողմանէ
ևս հաւասարապէս փոփոխական է, թէ
այլսարհադրութեամբ թէ հնաւանդ
պատմութեամբ, և թէ իւրաքանչիւր
ազգաց և դաւառաց սովորութեամբ. և
թերևս Վիրգիլիտա բաժնելով իւր թուա-
համարը, և ուզելով իւր քերթուածոյն
այլ և այլ մասանց մէջ ցրուել, չէ յա-
ջողած գերազանցել քան զՀոմերոս,
որ ըստ իւր քերթուածոյն կազմութեան
համեմատ, արդեւք մի չէ ունեցած յա-
ջողաբար կարգելու. և այս պատճա-
ռաւ մեկնիչք իր այս մասը Յանկ կ'ա-
նուանեն:

Ենէտայ պատերազմն ընդ Տուան-
սի՝ իլիականին երեք այլ և այլ պա-
տերազմէն առած է. նախ երրորդ դրոց
մէջ Պարիսի և Մենելաւեայ մենամար-
տութենէն, երկրորդ՝ եօթներորդ դրոց
մէջ Հեկտորի ընդ Այասի. և երրորդ՝ 'ի
քսաներորդ չորրորդ գրոց մէջ Ա. քիլլե-
սի և Հեկտորի:

Աթենաս՝ հինգերորդ գրոց մէջ կը
բանայ զայս Դիոմեդեայ, և կը պարզէ
ամենին այն ստուերը որ մահկանա-
ցուած խոյ ընդ ոտն լինի տեսնել զաս-
տուածս. և այսու Դիոմեդէս կը տեսնէ
յոյանապէս զԱստղիկ և զԱրէս 'ի խը-
ռան պատերազմին: Նոյն կերպով Աստ-
ղիկ կը յայտնէ Ենէտայ, նշանաւոր
դիպուածի մի մէջ ահաւոր արկած
մը, որ Ենէականին մէջ ամենէն ե-

պատշաճաւ զանց կ'առնենք, առաքելով զԵ-
թերցողս 'ի Մարկիաքաղ Հատուածս յօտարազգի
քերթողաց, Մասն Բ. Գերբուածք. Նկարա-
գրականք:

րեակայականն է. և լուսաւորուած սոյն | նապէս զատուածս թշնամիս Տրովայ,
սոյս յայտնութեամբ, կը տեսնէ յայտ | որ կը ջանան հիմնովին կործանել զայն:

« Ասաց ու 'ի ստուերս թանձրախիտըս գիշերոյ եղև անտես .
« Եւ ահա ցնորք ընդդէմ՝ Տրովայ և զօրութիւնք դից գլիմամարտը
« Երեւէին
« Երեքժանեանն անդ մեծաւ շարժէ զպարիսպըս Պիտիդոն .
« Եւ 'ի հիմանց բախանդակ ըզգատակերտըս տապալէ .
« Չարկէականն ըզգրունս ահա կանխէ գրաւէ Օդոյի
« Եւ 'ի նաւաց զայրադին ձայն տայ կոչէ զըսպառազէն
« Գունդս ընկերաց . հայկաց 'ի վեր, բարձր 'ի զըզեակս ահա բաղմի
« Տրիտոնեանն Պալլաս՝ 'ի մէջ ամպոց փայլատակեալ .
« Եւ վառեալ 'ի կառափըն զըժնէին Գորգոմիայ :
« Ինքն իսկ Հայր ազդէ 'ի սիրտ դանայեցւոյ կորով 'ի մարտ .
« Նա ինքն ըզգրիս յարուցանէ դարդանական զինուոց ընդդէմ . .

Իսկ աստուածոց խորհրդի նստիլն՝ եւ
նէականին տասներորդ գրքին մէջ, Ա-
րամազդայ և Աստղեան բանագնացու-
թիւնն առաջնոյն մէջ, նոյնպէս Արա-
մազդայ և Հերայի երկոտասանին մէջ,
ուրիշ բան չեն բայց եթէ օրինակու-
թիւն, այլ ամենագեղեցիկ և հրաշալի
օրինակութիւն այնպիսեաց՝ որք անթիւ
տեղեր կը գտնուին Հոմերոսի գրոց
մէջ, Հեկեանայ ընծայք առ Տրեմմար
Ոգիսականին մէջ, Վիրգիլեայ պատճառ-
եղեր են այն ընծայից զորս Անտրոմաք
կ'ընէ Ատտիւրաբայ Ենէականին մէջ:

Պատերազմի այլ և այլ եղանակներ,
վիրօք և կամ մահուամբ իյնալ 'ի պա-
տերազմի և այլ այսպիսի նկարագրու-
թեան տեսակներ, բոլորովին 'ի յունա-
կանէն առած է: Նոյնպէս կրնանք ըսել
այն ամէն բազմատութեանց համար,
որ այս մասանց մէջ աւելի յաճախ կը
գտնուին քան թէ ուրիշ պարագայից
մէջ. որոնք Վիրգիլիոսի մէջ այնպիսի
գեղեցիկ և ազնիւ ընտրութեամբ և ա-
րուեստիւ կարգուած են, որով շատ
անգամ կը հարկաւորինք ըսել թէ այն-
չափ հարստութեանց և անգին իրաց
մէջ, որովք լեցուցած է իւրքերթուածը
Հոմերոս, բազդաւոր գտնուած է Վիր-
գիլիոս ընտրանաւ իւր քերթուածոյն
մէջ անցնել, Հոմերոս առատաբար ցը-
րուած է զանոնք իւր քերթուածոց ա-
մէն կողմը. և առ այս երբեմն քննա-

դատք կը ստղծանեն վինքն ըսելով թէ
շատ անգամ մէկմէկու կը նմանին քան
թէ բողոքատեալ իրին, ուսկից ազատ կը
գտնեն զլատին բանաստեղծը. սակայն
միշտ պէտք է յիշել որ Հոմերոս առա-
ջին հեղինակն եղած է և Վիրգիլիոս
հետևող իրեն:

Իլիականին ութերորդ երգոյն մէջ
այնպիսի հանգամանք մը կը տեսնենք,
որ է իբրև հանգոյց ամբողջ դիւցազն-
երգութեան, զոր իրաւամբ քննադատը
ողբերգութեան մը հետ կը բազդա-
տեն: Արամազդ ուղեւով ցուցնել Յու-
նաց թէ որչափ մեծ էր Աքիլլէսի օգ-
նականութիւնը, և անոր յԱգամեմնոնէ
ընդունած թշնամանաց վրէժը առնելու
համար, առ ժամանակ մի կը զօրացնէ
զբանակս Տրովացւոց, այնպէս զի Յոյիք
տեղի կու տան 'ի վախուստ, և ոչ
յապահովի վինքեանս կարծելով՝ ցիր-
ուցան կը լինին, որոնց գիշերն 'ի խա-
փութեան և յանհնարին անհանգստու-
թեան կ'անցընեն:

Այն ատեն 'ի հարկէ գործոց ըմբռ-
նեալ՝ խորհուրդ կ'առնուն աղաչաւորս
առաքել առ Աքիլլէս, զոր դժկամակու-
թիւն և ահաճութիւն հեռացուցած էր
պատերազմէն, 'ի կողմանէ Ագամեմնո-
նի հատուցանել զպարտաւատչան պա-
տին և անակնունելի ընծայիք մեծա-
րեւ զնա: Այս էր ահա նպատակն և
վախճանն Արամազդայ, յոր կ'ուզէր

հասցընել զՅոյնս, և առ թեոտիս ըրած խոստման կատարումն՝ յառաջին երգս իլիականին, ընդհակառակն Տրովացիք տէր զաշտալայրաց և բանակաց, լի վրա տահալթեամբ և քաջասրտութեամբ, բանակին ամեն կողմը լուսաւորելով՝ ուրախութեամբ արշալուսին կը սպասեն, նորէն Յունաց վրայ խաղալու, և քեւել հասցընել մինչև իրենց նաւերը, և ՚ի նաւատորմի խռովքընել զանոնք, Չկայ արդարեւ աւելի գեղեցիկ և հրաշալի նկարագրութիւն քան թէ ասոնց մէկուն խռովութիւնը և միւսին վստահութիւնը, և կ'երևի որ այս անգոյս մէջ քերթոյս ուղած է իւր հանճարոյն յետին ճիգն՝ ՚ի գործ դնել, և հրաշալիք մ'ընծայել մարդկութեան:

Վիրգիլիոս իր շահասէր ձրիքն՝ բռնորովին այս մասս սեփականած է: Վասն զի համարելով որ Ենէաս ՚ի Լատին հասնելով հոն հաստատած լինի իւր բանակը, և անդ ամուր սպաստանի կազմած է՝ իւր բանակը զերծ պահելու ՚ի դարանակալութեանց, նա մօնաւանդ ինքն այլաց դարան կազմած լինի, իւր զօրովարաց ձեռքը թողլով հրամանատարութիւն, կը նաւարկէ Տիրերիսի վրայէն, երթալ անձամբ օգնութիւն խնդրել յեւանդրեայ: Հերա կ'իմանցնէ Տուռնոսի այս Ենէասայ բացակայութիւնը ՚ի նպատտ գործելու: Տուռնոս կը յարձակի անոնց վրայ և կը պաշարէ յամենայն կողմանց զՏրովացիս, և կը սպառնայ մէկ օրուան մէջ բռնորովին քննել, Հռոմուլեանք կը յաղթանակեն, և ամենայն ուրախութիւն կը տիրէ անոնց մէջ, ընդհակառակն ահ և երկիւղ կ'ըմբռնէ զՏրովացիս՝ Ենէասայ բացակայութեամբ, գրեթէ նոյնպէս կը տիրէր Յունաց վրայ Աքիլլէսի բացակայութեան ատեն:

Եւ ահա այս ատեն է որ Նիսոս և Եւրիալ կը խնդրեն որ հրաման տան կտրել անցնիլ զթշնամին և երթալ առ Ենէաս: հրաման ընդունելով, թշնամոյնբանակին մէջ նոյն կոտորած և աւերածն ըրին, զոր Գիոմիդէս և Ոգիսևս գործեցին նոյն զիշերին Տրովացոյց

բանակին մէջ, որոյ վրայ արդէն խօսեցանք քիչ առաջ:

Իլիականին մէջ Նեստորին խնամքն՝ սովբեցնելու զՈգիսևս ինչ որ պիտի ըսէր Աքիլլէսին՝ զինքը հաշտեցընելու համար, բաւական չհամարելով՝ ձեռքերով այլ կը բացատրէր՝ մինչդեռ Ոգիսևս չէր ուզեր լսել իրեն ձայնին: այս նոյն խնամքն կ'երևի յԱքքանասն Վիրգիլիոսի, յորում չի գիտցուիր ո՞ւմ ընծեռել զգերազանցութիւնը, ծնունդն և թէ մանկան, սրը հաւասարապէս հասարակաց օգտին համար կ'աշխատէին: սակայն եթէ աղէկ քննելու լինինք նոյն է երկուքն նպատակն, բայց ծնունդը և տղու մը սարբերութիւնը նոր բան մը կ'երևին ընթերցողին, և զիմանողութիւնը այնչափ աւելի կատարեալ կ'ընէ, առ որ քաջ ուշիմութիւն պէտք է աղէկ կերպով իմանալու համար: Բայց Եւրիալայ և Նիսոսի Ժահն բնաւ նմանութիւն չունի, թէպէտ և իլիականին Տրոնի մօհն այս բանս առ թած լինի Վիրգիլիոսի, բայց ինքը այս տեղոյս մէջ բլորովին տարբեր ո՞ճ բռնած է: Տրոն այս անգոյս այնպէս կը պատշաճի, ինչպէս Հռոմի կարիփսէ յաւերժահարսն՝ Վիրգիլէայ Գիդէին: Եւրիալայ մօր ողբը և արտասուքն նոյն են գրեթէ, ինչ որ կ'ընթեռնունք Հռոմի մէջ՝ Պատրոկլի և Հեկտորի մահուան վրայ:

Կարճընենք խօսքերնիս արդ ուրիշ հատուածի մը վրայ, յորում նմանողութիւնն սքանչելի կերպով յաջողած է, այս է Պատրոկլի մահն. որ կերպով մը իլիականին հանգոյցը կը քակէ:

Աքիլլէսի ցաւելով Յունաց թշուառութեան վրայ, կը հաւանի անոնց աղաչանաց, չմանել անձամբ պատերազմին մէջ, այլ խրկել իւր բանակը Պատրոկլի առաջնորդութեամբ, որպէս զի ջանայ յիտս մղելու զՏրովացիս և իրեն ներսն տայ զքաջասրտութիւն: Բայց որչափ չուզեց ինքն անձամբ երթալ, այլ զրկեց իւր ահ և երկիւղը՝ որ միշտ իրեն հետ կը տանէր. կու տայ իւր անձնական զէնքը Պատրոկլի, երանի թէ

կարող լինէր տալ նաև իր քաջութիւնն
և յաջողակութիւնը: Պատրուկ՝ Հեկտո-
րի ահաւոր հարուածով կ'իյնայ 'ի պա-
տերազմի: Աքիլլէս սաստիկ կերպով
կը ցաւի, և որպէս զի իր բարեկամին՝
նա մանաւանդ իր ազգին վրէժն առնէ,
քաջութեամբ պատերազմին մէջ կը
մտնէ, և ահաւոր կտորած մի կ'ընէ, 'ի
մահ մատնելով նաև գէնկտոր, տալով

վերջին հարուած մը Տրոյիայ բաղդին
Վիրգիլիոս անտարակոյս զՊատրուկ
իւր առջկն ունէր, երբ զպատանեակն
Պալլաս՝ Եւանդր թագաւորին որդին
Ենէասայ հետ կը միացընէ. իր ծերունի
հայրը յանձնած էր իրեն, որպէս զի
գլուխ կենայ այն բանակին որ իրեն օգ-
նութեան կը ջրկէր, և սւսանի իր ձե-
ռաց տակ զինուորական արուեստն:

« և յաւելից

« Տալ զսա քեզ, ըզմխիթար իմ՝ և ըզյոյս, ըզՊալլաս.

« Ընդ քե ուսցի սա 'ի զէն, ուսցի 'ի տոկ զըժընդակաց

« Արիսական վաստակոց, և արուժեանց քոց 'ի տեսիլ

« Զարմանալ. աստըստին 'ի սկըքնաբոյս տիոցն ընդ քեզ . . .

Պպանանի 'ի Տուանեայ մասաղա-
տունէս այս իխնան, որպէս Պատրուկն
'ի Հեկտորէ, և Տուանոս պերճանայ ա-
ւարառութեամբ զինուց նորա, որպէս
Հեկտոր որ դառնայր 'ի պատերազմէ
կրելով զգէնս Պատրուկի: Ենէաս կ'ըզ-
գենու զքաջարտութիւն, և կը սպաննէ
զՏուանոս, որպէս Աքիլլէս գէնկտոր:

Հոմերոսի մէջ Աքիլլէսի ցաւն՝ Պա-
տրուկի մահուան վրայ աւելի սաստիկ
է, քան թէ Վիրգիլիոսին մէջ Ենէասի
ցաւն Պալլասայ վրայ: Աքիլլէս տկա-
րութեամբ յուսահատութեան մէջ կ'իյ-
նայ, զոր Պղատոն իրեն արժանի չի հա-
մարիր. և որ յերաւի ներելի չի կրնար հա-
մարուիլ, բայց եթէ մոերիմ բարեկա-
մութեան մը համար, որ զիրենց երկար
ժամանակ ընդ իրեարս միացուցած էր:

Իսկ Ենէասին աւելի իմաստու-
թեամբ, և աւելի պատշաճ կը տես-
նուի զիւցազնի մը: Վիրգիլիոս չէր կըր-
նար աւելի աղէկ կերպով հետեիլ Հո-
մերոսի այս հատուածին մէջ՝ որ կը
կ'ըբէր զիլիականն, ինչպէս և զԵնէա-
կանն աւարտելու ծառայեց:

Ենէաս չունէր մէկ մը՝ որոյ բարեկա-
մութիւնն այնչափ օգտակար ըլլար իրեն,
որչափ Աքիլլէսի շահաւոր են Պատրու-
կի բարեկամութիւնն: Եւ անպատակ
կը մը կը լինէր՝ սպանանել տալ զԱքա-
նաս, որ գեռ մանուկ էր, և նոյն իսկ
զիւցազնն Ենէաս շատ իսկ սղնորուելու

առիթ ունէր իտալիոյ մէջ բրածպատե-
րազմին նպատակաւ, ուստի կարօտէր
նոր վրէժխնդրութեան զգացմամբ բոր-
բորուելու, ծայրագոյն ցաւով մը՝ զոր
կրնար առթել ամենասիրելի որդւոյ մը
կորուստն 'ի ձեռաց թշնամոյն:

Ընդհակառակն Աքիլլէս մեծ շահ մը
չունէր Տրուական պատերազմին մէջ,
ինչպէս կը ծանուցանէր Ագամեմնոնի
նոյն իսկ քերթուածոյն սկզբնաւորու-
թենէն, և գիտելով հանդերձ որ պի-
տի մեռնէր հոն, հարկեցուցիչ պատ-
ճառաւ մը կը ստիպուէր մտնել 'ի պա-
տերազմն, մոռնալ իրեն ընդունած առ-
հաճութիւնք և նախատինք, որ իր աչ-
խատութեանց միակ վարձք կը լինէր:
Ահաւասիկ այս է որ մի և նոյն նիւթոյն
վրայ այլ և այլ կերպով խօսեցընել կու-
տայ. բայց որովհետև Վիրգիլ զայն
հրաշալի կերպով նկարագրուած գտած
է Հոմերոսի մէջ, անոր համար ջանա-
ցեր է, որչափ իւր քերթուածն կը տա-
նի՝ մերձենալ առ այն: Պալլասայ բնու-
ւորութիւնն այնչափ շնորհալի և ազ-
նուական էր, որ անկարելի լինէր Ե-
նէասայ չարտասուել անոր վրայ. և ու-
րովհետև Պալլաս աւելի երիտասարդ
էր քան զԵնէաս, անոր համար աւելի
զգացման առիթ կ'ըլլար քան զՊատ-
րուկ՝ որ աւելի ծեր էր քան զԱքիլլէս:
Դարձեալ պէտք է գիտնալ որ եթէ
Տրոյիոյ պատերազմն Հեկտինէի համար

էր, նոյն Ենէասայն ալ է Լուսինիայի հա-
մար, զոր կը կարծէր թէ Տուսնոս կ'ու-
զէ իրեն ձեռքէն առնուլ, և կամ յա-
փըշտակել զայն իրմէն՝ զոր իրեն խոս-
տացած էին աստուածք:

Ենէականին Լատինոս թագաւորն՝ է
նոյն Իլիականին Պրիամոս թագաւորն:
Պրիամոս տկարամտութիւնն արգելք կը
լինի տալ զՀեղինէ, ուստի և Տրոյիոյ
ամենայն աղիտից և թշուառութեանց
միակ աղբիւրն. նոյնպէս և Լատինոսի
որ արգելք կը լինի տալ Ենէասոյ զԼա-
ւինիա, որոյ արգէն սահմանած էին աս-
տուածք: Հուսկ ուրեմն որչափ որ 'ի
քննութեան քառնուէր զՀոմեր և զՎիր-
գիլ, այնչափ աւելի նիւթ կը գտնենք
առաջնայն մէջ՝ զորս երկրորդն փոխ
առած է:

Վիրգիլիոսի նախագաղափարաց մէջ
ամենագեղեցիկ կը գտնենք զազգա-
բանութիւնս, թէ ըստ ծրագրութեան
և թէ իւրպանչիւր մասանց համեմա-
տութեամբ առ ամբողջութիւնն, և թէ
ըստ գործոյն կատարման:

Քայց Վիրգիլիոսի սեփական և աչ-
քի զարնող մասերն են Սիւնոն, Լայեկովն
և Կամիլլա, և այն իմաստասիրական
մասն, որ վեցերորդ դրբին հրաշալի
զարդերէն մին է: Սիւնոնի շատախօսու-
թիւնն բարբոթին նոր կերպ միտնի, որ
ամենեւին Հոմերոսի մէջ եղածին չի
նմանիր, վասն զի ամենայն հնարք կը
բանեցընէ գունագեղեցիւ զստութիւնն
ճշմարտանման երեցընելու: Լայեկովն
օրինակ եղած է հռչակաւոր Քանդա-
կագործին, ինչպէս Հոմերոսի Արա-
մագոն՝ փոխառայն կարածին: Կամիլլա
աչքի զարնող բնութիւն մ'ունի, զոր
թոստայ 'ի կրօնինչն իւր փոխելով, իւր
հրաշալի քերթուածոյն ամենագեղեցիկ
զարդերէն մին ըրած է: Վերջապէս՝
Պիլիթագորասի վարդապետութիւնն,
զոր կը համարձակի Վիրգիլիոս իւր այս
քերթուածոյն մէջ անցնել, շատ ընտիր
կերպով յայտարար է այս տեղս, առանց
Հոմերոսի մէջ նոյնպիսի նմանութեան
առաջնութիւն մ'ունենալու: Այս ա-
մենայն կը ցուցնեն թէ Վիրգիլ էր միան-

գումայն մեծ բանաստեղծ, մեծ ճարտա-
բախտ, մեծ իմաստասէր և մեծ նկա-
րիչ: Նոյնպէս նաև ամենազգայուն և
գեղեցիկ է Ենէասոյ զԱնտրոմաք գլա-
նելն յեպիրոս, որոյ բերան դրած խոս-
քերն լի են ցառք, սիրով և մտերմու-
թեամբ: Թերեւս այս մասին մէջ Վիր-
գիլիոս՝ Ոգիտականին մէջ պատմուած
Պինեղայեայ երազէն օգտուած լինի.
բայց այս մասս աւելի համառօտ և աւել-
լի կենդանի է Լատին քան թէ յոյն
քերթուածոյն մէջ:

Դառնանք արդ Ենէականին առաջին
գրոց՝ սակաւիկ ինչ մեր ուշադրութիւ-
նըն ամենագեղեցիկ մասի մը վրայ
դարձնելու. այսինքն երբ Ենէաս կը
հասնի 'ի Կարքեդոն, և կը հայի 'ի պատ-
կերս որովք զարգարուած էր Դիդէի
տաճարն, յորս կը գտնէ Յունաց և
Տրովացոյ պատերազմն, և 'ի մէջ մէ-
ծամեծ զիւլաղանց զինքն ևս կը տես-
նէ: Չկայ մէկը որ այս բանին վրայ
չզարմանայ, Եւ յիշատի ինչ աւելի ազ-
գեցութիւն բնող բան մ'երևակայել
կրնայ որ քան թէ երբ իմանայ որ այլք
էր վրայ կը մոտենն, և նաև իր թը-
շուառութեանց վրայ, և որք արտաքին
ցոյցերով ևս յայտնուին, որոց վրայ
որ հազիւ դիպուածով ծանօթութիւն
կ'ունենայ:

Այսպէս ահա կը տեսնենք որ ար-
դիք՝ շատ օգտուած են Վիրգիլիոսի
այս հատուածէն և միշտ յաջող ելք ու-
նեցիր են: Եւ ասոր յայտնի օրինակ
մ'է Աստրէայ փառաց համար կանգ-
նուած տաճարն, զոր կը գտնէ այս հս-
կուուհին անապատ և անծանօթ տեղոյ
մը մէջ, ուսկից չէր կրնար նախատեսել
Պան որ օր մը անցնի Աստրէա: Քայց յետ
այսչափ քննութեանց որչափ որ իմա-
ցանք թէ Վիրգիլիոս այս մասս Հոմերո-
սէն փոխ առած չէ, սակայն կը թուի ինձ
որ այս գաղափարն ընդունած է յերդա-
հանէ, որ յարքունիան Ալկիսայ կ'եր-
գէ առաջի Ոգիտայ՝ առանց զինքը ճա-
նաչելու այնպիսի երգեր՝ որք կ'այլըյնն
զՈգիտես. նոյնպէս նաև կը հանդիպի
յարքունիան Մենեւաւայ՝ Տելամաքայ:

որոյ հետ Ոգիւստի վրայ կը խօսին, առաջ դիտնալու թէ ինքն Ոգիւստի որդին է :

Եւ չենք կրնար, ինչպէս ինձ կ'երեւի, չմիաբանել ըսելու թէ լատինն յոյն բանաստեղծին հետեած է . սակայն միայն այսու զանազանութեամբ՝ որ այս մասս միոյն մէջ երգ մի է և կամ վէպ մը, իսկ միւսին մէջ նկարագրութիւն մը . զանազանութիւն մը՝ որ կը ծածկէ ըզվոխառութիւն, և որ՝ ինչպէս ըսինք՝ ի քօղարիւն աւելի կատարեալ կ'երևոյնէ գնմանողութիւնն : Վերջապէս վիրգիլիոս իւր գիւցազներգութիւնն Հոմերի պարտի, իսկ իրեն յատուկ և սեփական են ուղղախոհութիւն և յատակամիտութիւն, որ բոլոր իր գրութեան մէջ կը տարածուի, ինչպէս և նմանողութեան եղանակն . այնպէս որ Հոմերոս դերականց է քան զնա, թէ գիւստից ար-

ժանաւորութեամբ, թէ բնական նկարագրութեամբ, թէ գաղափարաց բեղնաւորութեամբ, թէ նաև յունական լեզուին բնական դերազանցութեամբ քան զլատին լեզուն . նաև կրնանք ըսել որ Հոմերոսի քանի մի հատուածոց բանաստեղծութիւնք՝ վիրգիլիոսի համար եղած լինին ճարտարապետ մը, ինչպէս նախնիք տանց կառուցմամբ՝ ճարտարապետք եղած են իրենց սերունդոց : Եւ ահա այս մասանց վրայ էր իմ այս փոքրիկ հատուածս . իմ նպատակս Հոմերոսի և վիրգիլիոսի վրայ դատաստան ընել չէր, և ոչ ալ վերադասել զվիրգիլիոս քան զՀոմերոս, այլ ցոյցնել քանի մի հատուածներով լատին բանաստեղծիս՝ թէ ինչպէս կարելի է մեծամեծ հեղինակաց հետեիլ և նմանիլ, նա մանաւանդ նմանողութեամբ ինքնին ևս լինել օրինակ :

Հ. ԱՆՏՈՆ Զ.

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Հ Ա Յ Ի Ե Ն Ե Ա Յ

Ձի իանձարոցս իմ անուշակ
Ջարձնու յիս քաղցր յիշատակ .
Գալիսայ իբրը դուաբթադին,
Քայր իմ, աւուրքն այն էին .
Յամայր իցիս ինձ սիրելի
Յամայր, երկերդ իմ նայրենի :

Մինչ առ հրատին մերս ի խորհիթ,
Քայր իմ, գայթէքիչ բնդ միտ՝
Մայր մեր ի գիրկս իւր մի առ մի՝
Գլգուէր ըզմեղ փարելի .
Եւ մեք ի հերս ոսկեգիտակ
Մէն նամբարիկ դրոշմեաք :

Յիւլիցիս, քայր իմ, անդանօր
Ըզգդեակ այն՝ զոր թանայր Դօր,
Եւ զՄարեան բուրդ վաղընջական,
Ուր պըղինձն ազդ տայր արւընջան :
Ջիսաղաւէտն յիշիս լրճակ,
Ուր թախա առնայր ծիծեռնակ,
Ուր գայր թեքէր զեղէզն հովիկ,
Ու արփին ի ջուրս շողէր զոգտրիկ :

Ջիմս Հիլինն ո՞վ ոք ինձ տայր,
Ջլեառն իմ, զկաղնին ամպածրար :
Ի յուն նոցան ըզգիշիւր զօր
Ի ցաւս հեծիմ նարանոր . . .
Յամայր լիցիս ինձ սիրելի
Յամայր երկերդ իմ նայրենի :

Թարգմն. Է. Աղեքս. Գ.

ՇԱԳՈՐԴԻԱՆ